

ելնելով այս հաւատաքից, մենք պէտք է ընդունենք, որ պալարախտի գէմ պայքարի համար մնձ նշանակութիւն ունի մայրը — ազա ուրիմ մեր ամբողջ ուշադրութիւնը պէտք է դարձնենք ծնողի վրայ, որովհետեւ միայն առողջ կանայք են ծնում առողջ երեխաներ:

Ահա այստեղ է, որ նշանակութիւն ունի աղջիկների դաստիարակութիւնն ընդհանրապէս և նրանց Փիզիքական դաստիարակութիւնը մասնաւորապէս:

Այս խնդրին մէջ կարեւոր տեղ է գրաւում և աղջիկների կրկնակի հստագուտութիւնները, որպէս զի ժամանակին արտաքրուին պալարախտով բռնածներին. այդ տեսակ անձանց ենթարկել տիսպանութիւն (բռնադրան) հսկողութեանը, որ ժամանակին բնախեղդ անւի հիւանդութիւնը. մեկուսացնել այն անձանց որոնց հիւանդութիւնը զործոն ընթացք ունի, գնել նրանց սոցիալական այնպիսի պայմանների մէջ, որ նրանց հիւանդութիւնը կանգ առնի և չզարգանա, հսկել, որ հիւանդները չամուսնանան եւ հիւանդ ժառանգներ չծնին:

Պալարախտի գէմ պայքարելիս պէտք է միշտ նկատի ունենալ ժառանգականութիւնը և ուղղել ուշադրութիւնը գէպի այդ կողմը, ձեռնարկելով միջոցներ փրկելու հիւանդութեան ճիրաններից ժառանգներին և այդպիսով կասեցնել պալարախտի տարածումը:

Ե Ր Ե Լ Ա Ն

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԻՔԵԱՆ

Առողջապահութեան ժողովրդական Կոմիտարիատի  
Սանհիտարական Լուսաւորութեան Ենթարամնի Վարիչ

## Ն Ա Ր Ի Ն Զ Ի Մ Ա Ս Ի Ն

ԷՇ ՄԸ ԱՄՄԻՐՏՈՎԱԼԱԲԻ «ԱՆԴԻՏԱՅ ԱՆՊԼԻՑ» ԳՐԱՒՆ (1478-1482)\*

Լաւն այն է որ զունն խիստ դեղին լինի և կեղեւն տաք և չոր է, և նուրբ. զնով քամեսատան (յօդացու) հանէ. և հուն ի յըզեղն ելանէ. և զմաւրուքն (մօրուք) շուտ բերէ, յորժամ զկեղեւն յերեսն աւծես (օծես). և ձէթն աւգոտէ (օգոտէ) ըսահային (գող), և ակապյին հովցաւերուն. և թէ թթուն՝ որ միս է՝ աւգոտէ տաք խափաղանին (սրտի բարախտում). և իր թթու ջուրն զսաֆրան կտրէ. և զփսիսելն այլ. և զստամոքսն կու լուանայ, և կերակուր ուտել կուտայ, զճիճին և զաւձն (օձ) կու հանէ, և ոսկրացաւին աւգոտէ և կեղեւին ձէթն աւգոտէ իր խէժով. զհերքունն (ցատկատուք, լորելից) տանի. և ի կտէն կէս մթխալ (տուր). բայց ջղերուն և կրծոցն զեն կառնէ. զիր չարութիւնն տանի մեղրն և աելպրաւն (արմաւ). Եւ իր փոխանն թուրինջն է: Ասէ Պա, թէ իր կեղեւն տաք Բ տարածան, և իր թթու ջուրն հով

(\*) «Անդիտայ Անպլից» կամ «Բառարան թժկական նիւթոյ» գրուած 1478-1482 Ամիրթովալաթ Ամասիացի կողմէ: Հրատ. Կ. Յ. Բասմաչեանի, Վիէնա, 1927:

և չոր է յառաջի տարածան. և ինքն քան զթուրինն նուրբ է. և նման է իր. և իր ծառն յայտնի է. և իր ուժն Բ բնութիւնն խառնը-ուած է, որ մէկ մէկի հակառակ է. և իր գեղին կեղեն տաք և նուրբ է, և իր թթուռթիւնն հով և չոր է Գ տարածան. և հունտն և տակն տաք և չոր է թէ զիր դալար կեղեն Գ շաբաթ ի հո. (հոսոմ) ձէթն թրջես և յարեւն գնես, իր ուժն եւ աւգուռթիւնն որպէս նարդինին ձէթն է. և թէ Բ մթխալ յիրմէն խմն՝ աւգտէ կարճահարին (կարի-ճէն խայթուռղին) և ամենայն դազանահարին, որ իր բնութիւնն հով լինի. և իր թթուն որ խմեն անսաւթուց՝ զլերդն վատուցնէ, և հով ստամոքին զին կ'առնէ, և տաք բնութեան լաւ է. և թէ ի հալաւն սեւ իրք թաթիս՝ տանի. և թէ յինքն քար թրջես՝ հալէ. և թէ իր մազմզուկէն լոսիո (արորել) եւ ի գինով խմես շատ աւգտէ ամենայն մահացու գեղոց (թոյն), Սստուծով, ամէն:

ԵԶ ՄԸ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՄԸ (1926)

« . . . Նարինջը երկար ատեն մնաց իրեւ հազուագիւտ և տենչալի պառող մը, զոր շատ քիչեր կրնային վայելել, այնքան սուղ էր անոր գինը Մեծահարուստներու սեղանին վրայ միայն կ'երեւէր ու-րիշ պառուղներու հետ, սակայն իրեւ զարդ. հրաւիրեալները ուտել չէին համարձակեր. Դեռ 100 տարի առաջ, նարինջ մը նուիրելը, ա-ռատաձեռնութիւն կը նկատուէր.

«Նարինջը՝ լիմոնի առաւելութիւնները ունի. մսուտ մասը կը պարունակէ մեծ քանակութեամբ վլիթամին, այսինքն այնպիսի նիւ-թեր որոնք աճումին կը նպաստեն: Երեխաններուն օրական 2-3 սուր-ճի զգալ նարինջի հիւթ տալու է, մանաւանդ անոնց որոնք պահա-ծոյ կաթերով կը սնուցանուին: Այդ հիւթը օգտակար է նաեւ հիւ-անդներուն, ապաքինողներուն, ծերերուն եւ գէշ սնունդ առնողնե-րուն կամ չորցած ու պահածոյ ուտելիքներով սնանողներուն:

Նարինջի մսուտ մասի անուշեղէնը (gelée, marmelade), շատ հա-մեղ, նուրբ և դիւրամարս ուտելիք մըն է որ կը յարմարի ստա-մոքսի, լեարդի և աղիքներու հիւանդութիւններէ տառապող անձերու:

Նարինջին կեղեւը զանազան հոտաւէտ նիւթեր կը պարունակէ: Անոր անուշը՝ թէեւ քիչ մը դժուարամարս, բայց ախորժակ կը բա-նայ: Աւելի ախորժարեր է ալքոլի մէջ պահուած թրունջի կեղեւը:

Պնդութեան գէմ ալ օգտակար է նարինջի կեղեւը: Պէտք է զայն կէս ժամ եռացնել ջուրի մէջ. թափել այդ առաջին ջուրը որ շատ լեղի է. երկրորդ անգամ կէս ժամ եռացնել շաքար ջու-րի մէջ. հանել, և պնակի մը վրայ գնել մինչեւ որ չորնայ: Մէկ նարինջի կեղեւը լաւ լուծողական է և միեւնոյն ատեն մազմը կը քակէ (cholagogue):

Նարինջի տերեւին խաչածոն (infusion) օգտակար է ստամոքսի խանդարումէ տառապողներուն, մանաւանդ ջղայիններուն: Մաղկե-ջուրն ալ հանդարացնեցիչ յատկութիւն ունի....»